

Բաժին 4. Նպաստներ և ծառայություններ

Medi-Cal նպաստները, որոնք ապահովագրված են Blue Shield Promise-ի կողմից

Չգիշերող հիվանդի (ամբուլատոր) ծառայություններ

Հետծննդաբերական խնամքի երկարացման ժամանակավոր ծրագիրը փոխարինվել է հետծննդաբերական խնամքի երկարացման նոր ծրագրով:

Հետծննդաբերական խնամքի երկարացման ծրագիր

Հետծննդաբերական խնամքի երկարացման ծրագիրը Medi-Cal-ի անդամներին ապահովում է երկարացված ծածկույթ ինչպես հղիության ընթացքում, այնպես էլ հղիությունից հետո:

Հետծննդաբերական խնամքի երկարացման ծրագիրը երկարացնում է Blue Shield Promise-ի ծածկույթը հղիության ավարտից մինչև 12 ամիս՝ անկախ եկամուտից, քաղաքացիությունից կամ ներգաղթի կարգավիճակից՝ առանց որևէ այլ գործողություն պահանջելու:

Ամբողջ գենոմի արագ հաջորդականացում

Ամբողջ գենոմի արագ հաջորդականությունը (Rapid Whole Genome Sequencing, rWGS), ներառյալ անհատական հաջորդականությունը, ծնողի կամ ծնողների և նրանց երեխայի համար տրիո հաջորդականությունը և չափազանց արագ հաջորդականությունը ապահովագրված նպաստ է Medi-Cal-ի մեկ տարեկան կամ ավելի փոքր անդամի համար, ով ստանում է հիվանդանոցային ծառայություններ վերակենդանացման բաժանմունքում: rWGS-ը վիճակների ժամանակին ախտորոշման նոր մեթոդ է, որը կարող է ազդել վերակենդանացման բաժանմունքներում (Intensive Care Unit, ICU) մեկ տարեկան և ավելի փոքր երեխաների խնամքի վրա: Եթե Ձեր երեխան իրավասու է Կալիֆորնիայի Երեխաների Ծառայություններին (California Children's Services, CCS), CCS-ը կարող է պատասխանատվություն կրել հիվանդանոցում մնալու և rWGS-ի ծախսերի համար: